

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աշոցքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի դաստիարակի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի

Խ/Խ	Հաստատության անվանումը,	Պաշտոնային պարտականությունները	Տվյալ պաշտոնը զբաղեցնողի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջներ	Որակավորման պահանջներ	Պահանջվող փաստաթղթերը
1	ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի «Աշոցքի մանկապարտեզ» ՀՈԱԿ	<p>Դաստիարակը՝</p> <ol style="list-style-type: none"> 1) պլանավորում և իրականացնում է սաների ուսուցումն ու դաստիարակությունը, կենսագործունեությունը, նախադպրոցական կրթության պետական չափորոշիչներին, կրթական ծրագրերին համապատասխան, 2) ուսումնասիրում է սաների անհատական ունակությունները, հետաքրքրությունները և հակումները, 3) նպաստում է սաների մոտ գործունեության տարբեր ձևերի հանդեպ հետաքրքրության բացահայտմանը. 4) աշխատանք է տանում սաների վարքի շեղման, վնասակար սովորությունների վերացման համար. 5) կատարում է ամեօրյա աշխատանք սաների սոցիալ-հոգեբանական հարմարունակության (ադապտացիայի) համար, 6) բուժանձնակազմի հետ համատեղ կանոնավոր իրականացնում է համալիր միջոցառումներ՝ ուղղված սաների առողջության ամրապնդմանը, հոգեբանական զարգացմանը, 7) սաների հետ տարվող ուսումնադաստիարակչական գործընթացում կիրառում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված ուսումնական ձեռնարկներ և նյութեր, մանկավարժական արդի տեխնոլոգիաներ, մեթոդներ, հնարներ, 8) խմբում ստեղծում է անհրաժեշտ պայմաններ՝ առօրյան, ուսումնադաստիարակչական աշխատանքները արդյունավետ իրականացնելու համար, 9) ակտիվորեն կիրառում է հաստատության մեթոդկաբինետի համապատասխան նյութերը, 10) երաժշտության դաստիարակի, ֆիզիքանսական, այլ 	<p>Դաստիարակի պաշտոնը զբաղեցնողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) տիրապետի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին, 2) իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնակցավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝ ա. Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխաների իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Լիցենզավորման մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը, «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը», Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, կրթության 	<p>1) Հաստատության դաստիարակի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ կամ ունենա միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և հատուկ դասընթացի միջոցով ձեռք բերի նախադպրոցական մանկավարժության, հոգեբանության և ուսումնամեթոդական հմտություններ ասպահովող առնվազն 20 կրեդիտ:</p>	<ol style="list-style-type: none"> 1) դիմում (Ձև 1) 2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ) 3) անձը հաստատող փաստաթուղթ 4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում) 5) 5) ինքնակենսագրություն (Ձև 1) 6) մեկ լուսանկար 3x4 չափի, 7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են

		<p>մանկավարժական աշխատողների հետ նախապատրաստում է տոները, ժամանցային, մարզական պարապմունքները,</p> <p>11) ժամանակին տնօրինությանը, բուժքրոջը, ծնողներին տեղեկացնում է սաների առողջական վիճակի փոփոխությունների մասին</p> <p>12) վարում է սաների հաճախումների մատյանը,</p> <p>13) վերլուծում է իր կողմից իրականացվող ուսումնադաստիարակչական գործընթացը, կատարում ինքնավերլուծություն, իրականացնում է բարելավման աշխատանքներ,</p> <p>14) մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին, խորհրդատվություններին,</p> <p>15) ծնողների հետ տանում է աշխատանք՝ ընտանիքում երեխաների դաստիարակության հարցերի ուղղությամբ, ներգրավում և խթանում է հաստատության հետ ակտիվ համագործակցությանը,</p> <p>16) խնամքով է վերաբերվում խմբին հատկացված գույքին, սարքավորումներին, պիտույքներին,</p> <p>17) վարում է գույքի, խաղալիքների հաշվառումը</p> <p>18) համագործակցում է դաստիարակի օգնականի հետ,</p> <p>19) ըստ ժամանակացույցի՝ սահմանված կարգով անցնում է բժշկական զննություն:</p>	<p>պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը. բ. Մանկավարժության, հոգեբանության, ֆիզկուլտուրայի, հիգիենայի, դաստիարակչական աշխատանքի տեսության և մեթոդիկայի հիմունքները:</p>		<p>նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական, 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)</p> <p>10) Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը</p> <p>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ</p> <p>2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից</p> <p>3) տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական</p>
--	--	--	--	--	---

					գործունեության իրականացմանը. 4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:
Դրույքաչափը	184041				
Դիմումների և փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը	2025 թվականի հունիսի 17-ին ժամը 17:30				
Մրցույթի անցկացման օրը, ժամը, վայրը	Օրը՝ 2025 թվականի հունիսի 20-ին Ժամը՝ 11:00-ին Վայրը՝ ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարան Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, Հրապարակ 1 Հեռ. 077 43-92-87				
Փաստաթղթերի ընդունումը	Փաստաթղթերը ներկայացնելու, թեստավորման փուլի հարցաշարը, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ Շիրակի մարզի «Աշոցքի մանկապարտեզ» ՀՈԱԿ (հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 1 փողոց 12, հեռ. 077 43-92-87, էլ. փոստ ashotski.mankapartez@mail.ru) կամ ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի բաժին, հեռ. 094 82-36-55 (հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք,				

	Հրապարակ 1		
--	------------	--	--